Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 մարտի 2024թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-174/23» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար խողովակների, ձևավորվածքների, սողնակների, կափույրների և միաոսպնյակային փոխհատուցչի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-174/23» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 7-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկը և 2023 թվականի դեկտմեբրի 22-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկի միջև կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-174/23-01/430 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով մատակարարման ժամկետ է սահմանված պայմանագրի կնքման օրվանից 160 օրացուցային օրը: Սակայն Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկը գրությամբ դիմել է «ՀԱԷԿ» ՓԲԸ և խնդրել է լուծել պայմանագիրը, քանի որ անհնար է արտադրող գործարանում պատվեր ձևակերպել: Հաշվի առնելով Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկից ստացված գրությունը՝ Պայմանագիրը միակողմանի լուծվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակվելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**